



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

#### ՀՐԱՄԱՆ

2017թ.ապրիլի 19

թիվ 51-Ա

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների և 22-րդ կետի պահանջներով՝ **հրամայում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը (պետ՝ Հ.Ղոնաղյան), իսկ գնումների համակարգող՝ աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Ժենյա Տանուտերյանին:
2. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ